


ՀՀ բանկային համակարգի 2009-ի 1-ին եռամսյակի գործունեության համառոտ վերլուծությունը

Համաշխարհային ֆինանսական ճգնաժամը, ինչպես նաև մարտ ամսին դրամի կտրուկ արժեզրկումն (մոտ 22 %-ով) իրենց բացասական ազդեցությունը թողեցին ՀՀ բանկային համակարգի 2009-ի 1-ին եռամսյակի արդյունքների վրա: Պետք է նկատել, որ չնայած հաշվետու եռամսյակի արդյունքներով շատ ցուցանիշների գծով համակարգում արձանագրվել են բարձր աճեր, այնուամենայնիվ, պետք է նշել, որ դրանք հիմնականում պայմանավորված են եղել դրամի նկատմամբ դոլարի փոխարժեքի կտրուկ բարձրացման շնորհիվ բանկերի արտարժույթային ակտիվների և պարտավորությունների վերագնահատումով: Դրամի նկատմամբ դոլարի փոխարժեքի կտրուկ փոփոխության արդյունքը խորապես ազդել է նաև մաքուր շահույթի ցուցանիշի վրա՝ ավելի մեծ էին վերագնահատման հետևանքով առաջացած ծախսերը, քան եկամուտները, և որի պատճառով էլ համակարգում ապահովվել է ցուցանիշի անհամեմատ ցածր մեծություն: Համակարգի ինը բանկեր եռամսյակը փակել են վնասով, մյուսները նախորդ եռամսյակների համեմատ ապահովել են շահույթի ոչ բարձր մակարդակ:

Այսպես, համակարգի ընդհանուր ակտիվները հաշվետու եռամսյակում աճել են 10.2%-ով կամ 105.2 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 1141.5 մլրդ դրամ: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարվա 1-ին եռամսյակի ընթացքում ընդհանուր ակտիվներն ավելացել էին 36.0 մլրդ դրամով, իսկ 4-րդ եռամսյակում՝ մոտ 69.6 մլրդ դրամով: Ընդհանուր ակտիվների 1-ին եռամսյակի վերը նշված աճը պայմանավորված է նաև արտարժույթային ակտիվների վերագնահատման դրական արդյունքով:

Վարկային ներդրումները 1-ին եռամսյակի ընթացքում ավելացել են 4.6%-ով կամ 29.4 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում նվազել 4.2%-ով կամ 3.3 մլրդ դրամով և եռամսյակի վերջին կազմել համապատասխանաբար 675.9 և 76.6 մլրդ դրամ, ընդ որում՝ անցած տարվա 1-ին եռամսյակի ընթացքում վարկային ներդրումներն աճել էին 12.8%-ով կամ 54.6 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 5.3%-ով կամ 5.0 մլրդ դրամով: Հարկ է նշել, որ նախորդ տարվա 4-րդ եռամսյակում վարկային ներդրումներն աճել էին 4.3%-ով կամ 22.3 մլրդ դրամով, ներդրումներն արժեթղթերում՝ 3.0%-ով կամ 2.3 մլրդ դրամով: 2009-ի մարտի 31-ի դրությամբ համակարգի վարկային ներդրումները կազմել են ընդհանուր ակտիվների 59.2%-ը, ընդ որում տնտեսությանը տրված վարկերի բաժնեմասը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 58.8%-ը կամ 397.4 մլրդ դրամ, և այս ցուցանիշը հաշվետու եռամսյակի ընթացքում աճել է 18.7%-ով կամ 62.6 մլրդ դրամով, որը 2008-ի 1-ին եռամսյակի համանուն ցուցանիշը գերազանցել է 6.0 տոկոսային կետով կամ 36.1 մլրդ դրամով, միաժամանակ նշենք, որ 12.6 տոկոսային կետով կամ 49.3 մլրդ դրամով գերազանցվել է նաև նախորդ եռամսյակի համանուն ցուցանիշը:

2009-ի մարտի 31-ի դրությամբ վարկերի կառուցվածքն ըստ տնտեսության ճյուղերի (մլրդ դրամ)




Ֆիզիկական անձանց տրված վարկերը հաշվետու եռամսյակում նվազել են 12.8%-ով կամ 38.2 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 259.3 մլրդ դրամ, որի կառուցվածքում սպառողական վարկերը կազմել են 211.8 մլրդ դրամ կամ ընդհանուր վարկային ներդրումների 31.3%-ը, իսկ հիփոթեքային վարկերը՝ 88.0 մլրդ դրամ կամ ընդհանուր վարկային ներդրումների 13.0%-ը: Հաշվետու եռամսյակի ընթացքում 7.6 տոկոսային կետով նվազել է նաև ֆիզիկական անձանց վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր վարկային ներդրումներում. այն մարտի 31-ի դրությամբ կազմել է 38.4%: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում ֆիզիկական անձանց տրված վարկերի աճը կազմել էր 15.7% կամ 32.5 մլրդ դրամ, իսկ 4-րդ եռամսյակում՝ 1.7% կամ 5.1 մլրդ դրամ: 2009-ի 1-ին եռամսյակի ընթացքում սպառողական վարկերի ծավալը նվազել է 7.6%-ով կամ 17.4 մլրդ դրամով, ընդ որում հիփոթեքային

վարկերի ծավալն աճել է 3.7%-ով կամ 3.2 մլրդ դրամով: Տեղին է նշել, որ նախորդ տարվա 1-ին եռամսյակում վերը նշված ցուցանիշների համապատասխան աճերը կազմել են 40.0% կամ 51.2 մլրդ դրամ և 109% կամ 5.9 մլրդ դրամ, իսկ 4-րդ եռամսյակում՝ 1.0% կամ 2.4 մլրդ դրամ և 0.9% կամ 0.7 մլրդ դրամ:

Առաջին եռամսյակի ընթացքում ընդհանուր ակտիվների գծով առավելագույն աճ ապահովել է «ԱՄԵՐԻԱԲԱՆԿԸ» և այն կազմել է 31.7 մլրդ դրամ, տնտեսության վարկավորման գծով՝ «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկը»՝ մոտ 35.3 մլրդ դրամ, ֆիզիկական անձանց վարկավորման գծով՝ «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկը»՝ 12.3 մլն դրամ, սպառողական վարկերի գծով՝ «ՎՏԲ Հայաստան Բանկը»՝ 1.2 մլրդ դրամ և հիփոթեքային վարկերի գծով՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանը»՝ 0.5 մլրդ դրամ:


Պետական գանձապետական պարտատոմսերում ՀՀ-ում գործող բանկերից առավելագույն ներդրումներն ունեն «Ինելկոբանկը»՝ 9.9 մլրդ դրամ և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանը»՝ 9.3 մլրդ դրամ:

Համակարգում վարկային ներդրումների փոփոխման դինամիկան




ՀՀ բանկային համակարգի ակտիվները և վարկային ներդրումները 2009-ի մարտի 31-ի դրությամբ

Մլրդ դրամ



2009-ի մարտի 31-ի դրությամբ ՀՀ բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների ծավալը կազմել է մոտ 897.7 մլրդ դրամ, որը 1-ին եռամսյակում աճել է 12.5%-ով կամ 99.8 մլրդ դրամով: Հարկ է նշել, որ վերոնշյալ ցուցանիշն անցած տարվա նույն եռամսյակում աճել էր 2.8%-ով կամ 17.4 մլրդ դրամով, իսկ նախորդ տարվա 4-րդ եռամսյակում՝ 6.5%-ով կամ 48.5 մլրդ դրամով: Հաշվետու եռամսյակում ընդհանուր պարտավորությունների վերը նշված աճը հիմնականում պայմանավորված է արտարժութային պարտավորությունների վերազնահատման դրական արդյունքով: Ընդհանուր պարտավորությունների կազմում ֆիզիկական անձանց համախառն ավանդների (ցպահանջ և ժամկետային) աճը կազմել է 14.3% կամ 33.5 մլրդ դրամ, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդներինը՝ 24.4% կամ 53.7 մլրդ դրամ և եռամսյակի վերջում համապատասխանաբար կազմել 268.0 և 274.1 մլրդ դրամ, ընդ որում՝ ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների աճը կազմել է 18.8% կամ 32.2 մլրդ դրամ, իրավաբանական անձանց ժամկետային ավանդների աճը՝ 31.5% կամ 28.1 մլրդ դրամ (արձանագրված աճերը հիմնականում պայմանավորված են արտարժութային ավանդների վերազնահատման դրական արդյունքներով): Տեղին է նշել, որ նախորդ տարվա նույն եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց համախառն ավանդները նվազել էին 1.4%-ով կամ 2.8 մլրդ դրամով, իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 8.4%-ով կամ 20.8 մլրդ դրամով, ընդ որում՝ 7.5%-ի կամ 9.7 մլրդ դրամի աճ էր գրանցվել միայն ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների գծով: Ասվածին միաժամանակ ավելացնենք, որ ներգրավված ավանդների ծավալը նվազել էր նաև նախորդ տարվա 4-րդ եռամսյակի ընթացքում. այսպես՝ ֆիզիկական անձանց համախառն ավանդները նվազել էին 5.6%-ով կամ 13.9 մլրդ դրամով, իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 6.8%-ով կամ 16.2 մլրդ դրամով, սակայն 6.9%-ով կամ 5.8 մլրդ դրամով աճել էին իրավաբանական անձանց ժամկետային ավանդները: Վերոնշյալին նաև ավելացնենք, որ ներգրավված ավանդների (ֆիզիկական և իրավաբանական անձանց) ծավալը հաշվետու եռամսյակի վերջում կազմել է ընդհանուր պարտավորությունների 60.4%-ը:

Համակարգի ցպահանջ և ժամկետային ավանդների կառուցվածքը
2009-ի մարտի 31-ի դրությամբ (մլրդ դրամ)




- Իրավաբանական անձանց ցպահանջ ավանդներ
- Ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդներ
- Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ
- Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ


Հաշվետու եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների ներգրավման գծով առավելագույն աճ ապահովել է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանը», որը կազմել է 9.8 մլրդ դրամ՝ հաշվի առած նաև վերազնահատման դրական արդյունքը:

Իրավաբանական և ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային դեպոզիտների ծավալով առաջատար բանկը «Արդշինինվեսթմենթս» է՝ 48.7 մլրդ դրամով, այնուհետև նրան հաջորդում են՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանը»՝ 46.4 մլրդ դրամով, «Յունիբանկը»՝ 44.0 մլրդ դրամով, «Կոմվերս Բանկը»՝ 26.3 մլրդ դրամով և «ԱՍԵՐԻԱԲԱՆԿԸ»՝ 20.6 մլրդ դրամով: Եռամսյակային կտրվածքով վերոնշյալ ցուցանիշի ներգրավման լավագույն արդյունք ապահովել է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանը», որը բացարձակ մեծությամբ կազմում է 11.7 մլրդ դրամ՝ հաշվի առած նաև վերազնահատման դրական արդյունքը:


Հանակարգում ցպահանջ ավանդների փոփոխման դինամիկան



Հանակարգում ժամկետային ավանդների փոփոխման դինամիկան




ՀՀ բանկային համակարգի պարտավորությունները և ֆիզ. անձանց ավանդները
(ցպահանջ և ժամկետային) 2009-ի մարտի 31-ի դրությամբ




ՀՀ բանկերի ընդհանուր կապիտալն 1-ին եռամսյակի ընթացքում աճել է 2.3%-ով կամ 5.4 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 243.8 մլրդ դրամ, որը հիմնականում ապահովվել է բանկերի կողմից կուտակված շահույթի, ինչպես նաև կանոնադրական կապիտալի ավելացման հաշվին: Հարկ է նշել, որ ընդհանուր կապիտալը նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում ավելացել էր 10.5%-ով կամ 17.4 մլրդ դրամով, իսկ չորրորդ եռամսյակում՝ 9.7%-ով կամ մոտ 21.1 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի բաղկացուցիչներից մեկը՝ կուտակված շահույթը, հաշվետու եռամսյակի ընթացքում աճել է 3.9%-ով կամ 2.7 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 70.4 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 28.9%-ը: Հարկ է փաստել, որ կուտակված շահույթը նախորդ տարվա 1-ին եռամսյակում աճել էր 15.0%-ով կամ 6.0 մլրդ դրամով, չորրորդ եռամսյակում՝ 15.1%-ով կամ մոտ 8.9 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի մյուս կարևոր բաղկացուցիչ մասը՝ կանոնադրական կապիտալը, հաշվետու եռամսյակի ընթացքում աճել է 2.0%-ով կամ 3.0 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 155.5 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 63.8%-ը: Միաժամանակ արձանագրենք, որ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում կանոնադրական կապիտալը ավելացել էր 9.6%-ով կամ 10.6 մլրդ դրամով, իսկ 4-րդ եռամսյակում՝ 7.2%-ով կամ 10.2 մլրդ դրամով:

Հաշվետու եռամսյակի ընթացքում կանոնադրական կապիտալը համարվել է միայն «Յունիբանկի» կողմից և այն կազմել 3.0 մլրդ դրամ:

Համակարգում կապիտալի և կուտակված շահույթի փոփոխման դինամիկան



ՀՀ բանկային համակարգի ընդհանուր կապիտալը, կանոնադրական կապիտալը և կուտակված շահույթը 2009-ի մարտի 31-ի դրությամբ




ՀՀ բանկային համակարգում հաշվետու եռամսյակի ընթացքում ապահովվել է 1.1 մլրդ դրամ մաքուր շահույթ, որը 2007-ի 1-ին եռամսյակում ստացված մաքուր շահույթի ծավալին զիջել է 5.0 մլրդ դրամով, իսկ չորրորդ եռամսյակում ապահովված շահույթի ծավալին՝ 7.1 մլրդ դրամով: Համակարգի ինը բանկեր ընթացիկ տարվա առաջին եռամսյակը փակել են վնասով և ընդհանուր վնասը կազմել է 2.1 մլրդ դրամ: Համակարգում արձանագործված վերոնշյալ ցուցանիշի ցածր մակարդակը հիմնականում պայմանավորված է մարտ ամսին դրամի կտրուկ արժեզրկման հետ, որի հետևանքով արտարժույթային կարճ դիրք (երբ արտարժույթային պարտավորությունները գերազանցում են արտարժույթային ակտիվներին) ունեցող

բանկերի համար կտրուկ ավելացել են վերագնահատման արդյունքում առաջացած ծախսերը: Այնուամենայնիվ որոշ բանկերի հաջողվեց դիմակայել մարտ ամսվա ցնցումներին և եռամսյակը փակել շահույթով, ավելին՝ «Արդշինհիմվեստբանկին» նույնիսկ հաջողվեց գերազանցել նախորդ տարվա 1-ին եռամսյակի համանուն ցուցանիշը: Ասվածին ավելացնենք, որ 1-ին եռամսյակի ընթացքում համակարգի բանկերից մաքուր շահույթի առավելագույն ծավալ ապահովել է «Արդշինհիմվեստբանկը»՝ 1,3 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համանուն ցուցանիշը գերազանցել է 11.4 մլն դրամով կամ 0.9%-ով: Մինևույն ժամանակ փաստենք, որ 1-ին եռամսյակի ընթացքում բանկերի ընդհանուր եկամուտները կազմել են 48.1 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 45.8 մլրդ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համանուն ցուցանիշները գերազանցել են համապատասխանաբար 12.9 մլրդ դրամով կամ 36.5%-ով և 18.3 մլրդ դրամով կամ 66.8%-ով: Իսկ համադրելով 4-րդ եռամսյակում ստացված ընդհանուր եկամուտների և կատարված ընդհանուր ծախսերի հետ՝ ապա կարելի է փաստել, որ հաշվետու եռամսյակում ապահովվել է 306.3 մլն դրամ ավելի եկամուտ, սակայն կատարվել է անհամեմատ ավելի շատ ծախս՝ 8.6 մլրդ դրամի, որը հիմնականում հետևանք է դրամի նկատմամբ արտարժույթի փոխարժեքի կտրուկ բարձրացմանը: Կարելի է նաև նշել, որ հաշվետու եռամսյակում համակարգի հաշվեկշռային շահույթը կազմել է 2.3 մլրդ դրամ, որը զիջել է մոտ 5.5 մլրդ դրամով կամ 70.3%-ով նախորդ տարվա 1-ին եռամսյակի և 8.3 մլրդ դրամով կամ 78.2%-ով 4րդ եռամսյակի հաշվեկշռային շահույթների մեծություններին: Շարադրվածին միայն ավելացնենք, որ հաշվետու եռամսյակի ընթացքում ստացված ընդհանուր եկամուտների և կատարված ընդհանուր ծախսերի գծով առաջատարը «Արդշինհիմվեստբանկը» է՝ համապատասխանաբար 8.5 և 6.9 մլրդ դրամ գումարներով, իսկ հաշվեկշռային շահույթի ամենամեծ ծավալը նույնպես ապահովել է «Արդշինհիմվեստբանկը»՝ մոտ 1.6 մլրդ դրամ:

2009-ի 1-ին եռամսյակի արդյունքներով բանկերի ROE-ն՝ կապիտալի եկամտաբերության մակարդակը, մարտի 31-ի դրությամբ կազմել է 0.48 %, իսկ ROA-ն՝ ակտիվների շահութաբերության մակարդակը, նույն ժամկետի դրությամբ կազմել է 0.11 %: Պետք է արձանագրել, որ տեղի է ունեցել կապիտալի եկամտաբերության, ինչպես նաև ակտիվների շահութաբերության անկում անցած տարվա նույն ժամկետի համեմատ՝ ROE-ն նվազել է 3.22 տոկոսային կետով, իսկ ROA-ն՝ 0.68 տոկոսային կետով: Վերը նշված առաջին ցուցանիշի (ROE) ամենաբարձր արդյունքն եռամսյակի վերջում ապահովել է «Արդշինհիմվեստբանկը»՝ 5.85%, իսկ երկրորդ ցուցանիշինը (ROA)՝ «Պրոմբեյ բանկը»՝ 1.64%:

ՀՀ բանկային համակարգի հիմնական ցուցանիշների գծով տեղեկություններն, ըստ բանկերի, արտացոլված են աղյուսակ 1-ում:

ՀՀ բանկային համակարգի ամփոփ ցուցանիշները



2009-ի մարտի 31-ի դրությամբ հիմնական ցուցանիշները ըստ բանկերի,
դրանց աճը առաջին եռամսյակի ընթացքում և բանկերի գրաված տեղը համակարգում

Աղյուսակ 1.
(մլն դրամ)

Հ/Հ	Բանկերի անվանումը	Ընդհանուր ակտիվները					Ընդհանուր պարտավորությունները					Ընդհանուր կապիտալը					
		Ընդհան- մենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա կարգ	այդ թվում		Ընդհան- մենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա կարգ	այդ թվում		Ընդհան- մենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա կարգ	այդ թվում		
					Վարկ. ներդր- ումները	աճ/ նվազ (%)				Ֆիզ.անձ ժամկ. ավանդ	աճ/ նվազ (%)				Կանոն. կապի- տալը	աճ/ նվազ (%)	Կուտ. շահույթ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
1	ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ	140894,4	13,8	1	98084,7	14,3	113809,3	7,1	1	15833,3	25,4	27085,2	3,9	1	14567,2	0,0	9522,8
2	Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստ.	128234,0	5,3	2	76206,8	2,9	113356,6	16,0	2	39016,2	33,6	14877,4	-4,1	5	2437,6	0,0	12070,7
3	Արդշինհիմվեստբանկ	121054,6	6,3	3	74609,0	2,0	94468,2	7,4	3	22695,9	11,7	26586,4	2,6	2	15513,6	0,0	7692,0
4	ՎՏԲ Հայաստան Բանկ	105848,0	6,7	4	74981,0	6,8	81932,8	8,7	4	12495,4	14,6	23915,3	0,3	3	13906,2	0,0	5877,1
5	Կոնվերս Բանկ	75018,4	4,4	7	45083,9	4,5	62334,7	5,1	6	14639,6	6,4	12683,7	-3,4	6	1296,4	0,0	8809,4
6	Յունիբանկ	77901,3	13,3	6	48059,4	2,9	65432,3	11,4	5	36028,6	10,7	12469,0	31,8	7	8599,7	53,6	3328,6
7	Հայէկոնոմբանկ	50563,3	0,5	8	25625,9	-9,7	42151,3	1,4	8	5356,2	7,1	8412,0	-3,6	11	2333,3	0,0	5646,3
8	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	80885,0	64,4	5	36208,9	7,0	60379,4	66,7	7	4582,5	141,1	20505,7	0,7	4	18228,4	0,0	2297,1
9	Ինտերբանկ	48442,9	9,3	9	27157,6	-3,6	39085,8	8,8	10	8526,5	5,4	9357,1	11,7	9	2353,2	0,0	5236,6
10	Հայբիզնեսբանկ	46322,9	7,3	10	26760,7	4,7	39494,1	29,3	9	10728,3	8,2	6828,7	-1,5	14	5000,0	0,0	1710,2
11	Անելիք Բանկ	38155,9	5,5	12	20357,9	1,9	32509,2	12,8	11	6647,6	-1,1	5646,7	0,5	19	5300,0	0,0	884,2
12	Առէկսիմբանկ	38598,9	18,7	11	17694,9	-9,3	28905,0	10,9	13	7023,6	10,9	9694,0	-2,3	8	8497,3	0,0	955,4
13	Արցախբանկ	37020,4	16,5	13	26335,0	14,8	31269,6	38,3	12	3454,2	5,2	5750,8	0,9	18	2544,4	0,0	2660,1
14	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	27970,0	-5,9	14	14439,6	15,7	20338,4	-8,3	14	4296,6	424,7	7631,7	1,1	13	6128,0	0,0	1106,9
15	ԱրմՍվիսԲանկ	25383,8	8,1	15	7642,9	-3,8	19480,0	8,4	15	1921,6	28,3	5903,7	7,0	17	5001,0	0,0	629,9
16	Զարգ. Հայկական Բանկ	16600,9	1,8	18	10602,7	3,7	10644,1	1,1	16	5013,4	36,5	5956,8	2,9	16	4556,7	0,0	1041,8
17	Պրոմեթեյ Բանկ	18598,4	15,2	16	8770,1	-3,7	9277,2	11,9	17	1060,0	19,9	9321,2	3,5	10	7200,0	0,0	2072,4
18	Կասկադ Բանկ	13324,1	-4,2	19	7920,5	4,8	7742,7	0,5	19	1065,7	7,4	5581,5	-0,6	21	5535,0	0,0	-220,9
19	Բիբլոս Բանկ Հայաստան	17496,8	26,8	17	11223,4	6,2	9233,9	29,4	18	1449,7	15,4	8262,9	-0,5	12	8382,2	0,0	-121,4
20	ԲՏԱ Բանկ	9851,0	-25,3	22	5662,6	1,5	4277,9	-33,3	22	338,1	-39,1	5573,1	1,7	22	6520,0	0,0	-949,7
21	Պրոկրեդիտ Բանկ	12237,5	2,8	20	7852,2	8,9	6594,7	20,0	20	1248,4	37,1	5642,8	2,8	20	6090,0	0,0	-447,2
22	Մելլաթ Բանկ	11079,9	0,4	21	4637,2	5,5	4934,7	-0,6	21	70,7	26,0	6145,1	1,2	15	5500,0	0,0	590,2
	Ընդամենը	1141482,4	10,2		675916,9	4,6	897651,9	12,5		203492,1	18,8	243830,8	2,3		155490,2	2,0	70392,5